ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զեկուցող՝ համայնքի ղեկավար Հ.Գ. Նավասարդյան

2019 թվականի հունվարի 31-ին, ժամը՝ 16:00-ին Արմավիրի մարզի Շահումյան համայնքում տեղի ունեցավ ժողով՝ մասնակցությամբ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Գոռ Հովհաննիսյանի,Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու անդամներ՝ Լ.Վարդանյանի, Հ.Հաուբյունյանի, Ս.Ալոյանի, Կ.Եղիազարյանի, Վ.Համբարձումյանի, Ս.Հարությունյանի, Ք.Սադոյանի և համայնքի բնակիչների:

Հարգելի՛ ավագանու անդամներ համայնքի բնակիչներ և հյուրեր, ձեզ եմ ներկայացնում 2018 թվականի ընթացքում իմ կողմից կատարած աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

Ինչպես գիտեք, համայնքի բյուջեի միջոցով իրականացվում է համայնքի կենսագործունեությունն ապահովող ֆինանսատնտեսական քաղաքականությունը, ուստի ինձ համար կարևոր է ձեր կարծիքը բյուջեի գործընթացի մասին:

Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 10 աշխատողներից, որից 6-ը՝ հանրային ծառայողներ, 2-ը՝ հայացողական, 2-ը՝ տեխսպասարկման:
Համայնքապետարանի ենթակայության տակ գտնվում է մշակույթի տունը, որտեղ գործում է գրադարանը, պարի, երգի, նկարչության և սպորտի խմբակները: Մշակույթի տան գործունեության առարկան և նպատակը արտադպրոցական մշակութային և սպորտային բնույթի գործունեության իրականացումն է: Երեխաների և դեռահասների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ստեղծում, նրանց ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացման սպորտային, մշակութային գիտելիքների ձևավորման, որն իրականացվում է ի շահ անհատի, համայնքի, հասարակության և պետության: Խմբակները գործում են անվճար հիմունքներով:

Իմ հանձնարարությամբ Աշխատակազմի քարտուղարի կողմից իրականացվել է համայնքապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը: Նախապատրաստվել է համայնքի ավագանու նիստերի օրակարգը, նիստում քննարկվող հարցերի նախագծերը:

Հրավիրվել և վարվել է ավագանու 12 նիստ, որից 6-ը հերթական, 6-ը արտահերթ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» , «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով և իրավական ակտերով,

հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է պետության կողմից պատվիրակված և կամավոր լիազորություններ:

Աշխատակազմի քարտուղար Գ.Համբարձումյանը, պահպանելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, ժամանակին ապահովել է համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների առաքումը մարզպետարան:

Կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն համայնքի ղեկավարի մոտ: Ընդունելությանը եկած քաղաքացիներին տրվել է սպառիչ պատասխան:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանից և այլ կազմակերպություններից ստացված գրություններին պատասխանվել է ժամանակին և ապահովվել է այդ գրություններում նշված պահանջների կատարումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով՝ իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված մի շարք պարտադիր լիազորություններ:
Հաշվետու ժամանակաշրջանում վերահսկողություն է իրականացվել հողի հարկի և գույքահարկի հարկատեսակների հավաքագրման աշխատանքների նկատմամբ:

2018 թվականի ընթացքում ըստ բնագավառների կատարվել են հետևյալ աշխատանքները՝

Ֆինանսների բնագավառում

Հողի հարկը 2018 թվականի պլանով նախատեսված 4500.0 հազ. դրամի դիմաց, հավաքագրվել է 3557.3 հազ. դրամ, կատարողականը 79.1%:

Հողի վարձակալության վճարը պլանով նախատեսված 33.0հազ. դրամի դիմաց, հավաքագրվել է 33.0հազ. դրամ, կատարողականը 100 %:

Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլանով նախատեսված 3500.0 հազ. դրամի դիմաց , հավաքագրվել է 2888.4 հազ. դրամ, կատարողականը 82.5%:

Գույքահարկ շենք-շինությունների համար պլանով նախատեսված 200.0 հազ. դրամի դիմաց, հավաքագրվել է 317.1 հազ. դրամ, կատարողականը 158.8%:

Սեփական եկամուտների հավաքագրման կատարողականը պլանի նկատմամբ կազմել է 77.0%:

Քաղաքացիների, տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում `

- իմ իրավասության շրջանակներում միջոցներ եմ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսվարող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը,
- կազմեկերպել եմ համայնքի բնակիչների հաշվառում,
- կատարել եմ շուրջ 68 քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության եմ առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝

- համայնքում աղբահանությունը բնականոն կատարվում է ամիսը 3 անգամ՝ էջմիածնի քաղաքապետարանի բնակկոմունալ վարչության հետ կնքված պայմանագրի հիման վրա ,համայնքի բյուջեից ամսվա կտրվածքով հատկացվում է 80000/ութսուն հազար/ դրամ,
- համայնքի գերզմանատուն տանող ճանապարհի խճապատման և հարթեցման աշխատանքներն իրականացնելու համար համայնքի բյուջեից տրամադրվել է 400000 /չորս հարյուր հազար/ դրամ,
- համայնքապետարանի շենքի մասնակի կապիտալ վերանորոգման համար՝ եվրոդռներ, պատուհաններ, շինանյութ ձեռք բերելու և շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով համայնքի ֆոնդային բյուջեից հատկացվել է՝ 3459.1 հազ. դրամ,
- սահմանված կարգով բնակչությանը իրազեկվել է ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների, կառուցապատման հետ կապված օրենսդրական փոփոխությունների մասին:

Հողօգտագործման բնագավառում՝

- իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ,
- սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը,
- համայնքի հողօգտագործողներին հնարավորություն է ընձեռվել համայնքի գյուղտեխնիկայով իրականացնել վարուցանքի աշխատանքներ մատչելի գներով:

Առևտրի և ծառայությունների բնագավառում՝

- իմ լիազորությունների շրջանակներում հսկողություն է իրականացվել առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում՝

Իմ կողմից համայնքում կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ՝

- «Հայոց բանակի» 26-րդ ամյակի տոնի կապակցությամբ համայնքի 16 զինծառայողների ընտանիքներին նվերներ և ծաղկեփնջեր ձեռք բերելու համար համայնքի բյուջեից հատկացվել է 400000 /չորս հարյուր հազար/ դրամ գումար, որից 320000/երեք հարյուր քսան հազար/ դրամը՝ նվերների , 80000 /ութսուն հազար/ դրամը՝ ծաղկեփնջերի:

- «Տեառնընդառաջի» տոնի կապակցությամբ համայնքի 6 նորապսակ զույգերի նվերներ և ծաղկեփնջեր ձեռք բերելու համար համայնքի բյուջեից հատկացվել է 150000 /մեկ հարյուր հիսուն հազար / դրամ՝ որից՝ 120000/մեկ հարյուր քսան հազար/ դրամը նվերներ և 30000/երեսուն հազար /դրամ ծաղկեփնջեր ձեռք բերելու համար,
- կանանց մեկամսյակի տոնի կապակցությամբ բյուջեից հատկացվել է 280000/երկու հարյուր ութսուն հազար/ դրամ՝ համայնքապետարանի, մշակույթի տան թվով 10 կին աշխատակիցներին և 4 կին ավագանու անդամներին նվերներ ձեռք բերելու համար:

  Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ համայնքի վարչական բյուջեից հատկացվել է 300000/երեք հարյուր հազար/ դրամ, որից 22000/երկու հարյու քսան հազար/ դրամը ծաղիկներ /220 հատ վարդ/ և 80000/ութսուն հազար/ դրամը տոնական բացիկներ 220 հատ/ ձեռք բերելու նպատակով, որը նվիրվել է համայնքի 220 տնտեսությունների կանանց,
- համայնքի զորացրված 8 զինծառայողներին, տրամադրվել է դրամական օգնություն՝ յուրաքանչյուրին 20000 /քսան հազար/-ական դրամ,
- մայիսյան տոնների կապակցությամբ համայնքի ՀՄՊ վետերանին, Արցախյան պատերազմում զոհվածի, ԼՂՀ-ում ծառայության ընթացքում զոհվածի և վիրավորված զինծառայողների ընտանիքներին համայնքի բյուջեից տրամադրվել է 240000 /երկու հարյուր քառասուն հազար/ դրամ,
- մշտական ուշադրության է արժանացել համայնքի միջնակարգ դպրոցը: Դպրոցում իրականացվող միջոցառումները արժանանում են համայնքապետարանի աջակցությանը,

  Շրջանավարտներին «Վերջին զանգ»-ի կապակցությամբ միջոցառում և ավարտական երեկո կազմակերպելու համար համայնքի բյուջեից տրամադրվել է 500000/հինգ հարյուր հազար/ դրամ:

  Ուսուցչական կոլեկտիվին, գիտելիքի օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում, այնուհետև ճաշկերույթ, որի համար համայնքի բյուջեից հատկացվել է 200000/երկու հարյուր հազար/ դրամ:

  Գիտելիքի օրվա կապակցությամբ առաջին դասարան հաճախող երեխաներին ք.Երևան էքսկուրսիա կազմակերպելու նպատակով հատկացվել է 100000/մեկ հարյուր հազար/ դրամ:

  Նախակրթարան հաճախող երեխաների համար գրքեր ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեից հատկացվել է 150000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ,
- համայնքի բյուջեից թվով 11 ուսանողների դեպի Երևան անվճար երթևեկելու համար հատկացվել է 275000/երկու հարյուր յոթանասունհինգ հազար/ դրամ,
- ամանորյա տոնի կապակցությամբ միջոցառում կազմակերպելու և համայնքի 1- 10 տարեկան երեխաներին նվերներ ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեից տրամադրվել է 350000/երեք հարյուր հիսուն հազար/ դրամ:

Ամանորյա տոներիի կապակցությամբ համայնքի բնակիչներին շնորհավորելու նպատակով բյուջեից հատկացվել է 40000/քառասուն հազար/ դրամ բացիկներ ձեռք բերելու համար:

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում՝

- հաշվետու ժամանակաշրջանում համայնքի բնակչությանը տրվել է ֆինանսական օգնություն՝ համայնքում հարազատին կորցրած յուրաքանչյուր ընտանիքի՝ 50000/հիսուն հազար/-ական դրամ:

Գյուղատնտեսության բնագավառում՝

- կազմակերպվել է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքներ,
- իմ հանձնարարությամբ կազմակերպվել է անասնագլխաքանակի, ցանքատարածությունների, բերքատվության հաշվառում ըստ կուլտուրաների և ներկայացվել է հաշվետվություն վիճակագրական վարչություն:

Համայնքը ունի մի շարք կարևոր հիմնախդիրներ, որից առավել կարևոր է՝ Շահումյանի մանկապարտեզի շահագործումը:

Սիրելի՛ ներկաներ, ձեզ ներկայացրեցի 2018 թվականի ընթացքում համայնքի բյուջեի միջոցով կատարած աշխատանքները, ինչպես նաև ներկայացրեցի համայնքի կարևոր հիմնախնդիրը, որը հնարավոր չէ իրականացնել բյուջեի միջոցներով:

Շահումյան համայնքի ղեկավար՝ Հ.Գ.Նավասարդյան